



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

14 ԱՊՐԻԼԻ 2021թվական

### ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 7 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Գևորգյանը, Վահե Լևոնյանը, Կարեն Մանասերյանը, Գեղամ Վարդանյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Վարդանյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սաֆարյանը, Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գոռ Առաքելյանը, համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի Հովհաննիսյանը, առաջատար մասնագետներ՝ Սամվել Օրդոյանը և Կարեն Մարտիրոսյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը:**

**Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը:**

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Գլածոր համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 4 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գլաձոր համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեի 1-ին եռամսյակի ընթացքի հաղորդման մասին:

3. Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին:

4. Գլաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարելու համար համաձայնություն տալու մասին:

5. 2021 թվականին կազմակերպվող վարձատրվող հասարակական աշխատանքներին մասնակցելու համար համաձայնություն տալու մասին:

6. Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում քանո պատճառով կոտրված ուռենին Հովիկ Ավետիսյանի ընտանիքին տրամադրելու մասին:

7. Գլաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող չօգտագործվող ոռոգման խողովակաշարը և գազատարը ապամոնտաժելու համար թույլտվություն տալու մասին:

8. Գլաձոր համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը հաստատելու մասին:

9. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի խմելու ջրի արտաքին ցանցի չօգտագործվող խողովակաշարից ապամոնտաժելու և օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:

10. Գլաձոր համայնքի կողմից 2021 թվականին ներկայացվող սուբվենցիայի ծրագրային հայտերին համաձայնություն տալու մասին:

Կողմ-7	Դեմ-0	Ձեռնպահ-0
--------	-------	-----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42/

Լսեցին.

**ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ՆԱԻՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Գլաձոր համայնքի ղեկավարի կողմից ներկայացված՝ 2021 թվականի տարեկան բյուջեի 1-ին եռամսյակի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ-7	Դեմ-0	Ձեռնպահ-0
--------	-------	-----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43/